

ըսկանութիւնն և միմիայն լաւիւնութիւնն
գտած են անոր գործերուն մէջ. տեսակէս
մը որ չափազանցուած է ի հարկէ: Ահա-
բունեան կու լայ, բայց աւելի կը բողբէ,
ոտքի կը հանէ զսպուած հոգիները. լաւ-
կանութիւնը լոկ տկարութեան և համակամ
ստրկութեան հետեւանը մը պիտի ըլլար
շատ շատ, մինչ ինքը սարսուռ կը պատցնէ
հոգիներէն ներս, կը հրաւիրէ պայքարի,
ազատութեան տենչը կը բացարձարձէ,
կեանքի հրապոյրը կ'արթնցնէ, գաղտնա-
բական մը կը գծէ մաքերու առջև: Պրա-
կան, ներգործական գաղափարախօսու-
թեան մը գոյութիւնը անժխտելի է հեռու-
աբար իր ըով. ան միայն կրտսրական
արձագանգող մը չէ լոցի ու սղրի, լոկ
գոյրովի երգիչ մը, այլ մանաւանդ նպա-
տակի մը ձկտող առարեալ՝ ազատութեան,
արդարութեան և ճշմարտութեան:

Հայրենիքը ամէն ինչ է իրեն համար,
ու այս ձկտումը կը կազմէ մայր-երակը
իր բոլոր գգայնութիւնները, յայտնուած
գրեթէ ամենաբեր. հայրենի հողը, կլիման,
հայրենի տիպարները, բնութիւնը, կեան-
քը, ձիւնագագաթ «Մասիս»-ը մանաւանդ
կ'իշխեն իր վրայ և իր գործին մէջ: Ու
այս ձկտումն է որ կու տայ նաեւ գրաւիչ
գեղեցիկութիւն իր գէմքին և իր վիպական
գրականութեան: Ան անձնաւորումն էր
«ազատ ու անկտի» Հայրենիքի, իր
գործին մէջ արտայայտ հայ գիւղը, հայ
հոգին է որ կ'ապրի, և առար համար
ամէնէն հայագործող գրականութիւնն է Ա-
հարսնեանինը, ինչպէս թուամեանինը:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

(վերջ)

ՄԱՍԻՍԵՐՈՒՆ

Ի՞նչ երգերով գովքն հիւսեմ ձեր երկնասրլայ կատարներուն...
Դէմքս ահա՛ կանգնած էք դուք, պահակներու պէս մշտաբնութիւն.
Ձեր ներաշխարհն ե՞րբ, ո՞վ ըրաւ բրնակատուն Մայր-սղրին,
Որ գիւցուց անթիւ դարեր գիւցադուներն հէքեթային...:

Երկին-երկիր ու ծիրանի ծովն երկունքով ծընունդ տըլին
Երբ հըրաբորբ աչքներով Վահագնին հետ, բոցամարմին,
Լուռ վրկաներն եղաք անոր վաղքին, ուրկէ հոյլքն աստղերուն
Բիւրեղացան երկնի վըրայ, զերթ կաթնածիր շաւիղ մ'հետուն...:

Ձեր անքրթիթ ու հըրապայր աչքերուն դէմ, առտու, իրկուն
Մընացին վառ աստուշաններն հին հեթանոս աստուածներուն,
Ու հըրաչքով մ'անոնք յետոյ չիջան յանկարծ, փոշիացան.
Ձեր թոյլատու հայեացքին տակ, ուխտով մը վեհ, յաւերժական...:

Ի՞նչ տաղերով փառքն հիւսեմ ձեր հըրաբար, անմերձ կատարներուն,
Ուր դարանիստ ձիւնն ըսպիտակ իր բաշերովն յարածըլուն
Կը մարտնչի կատաղօրէն, որպէսզի միշտ մընայ թաղուն
Գաղտնիքն Ութին՝ լեռնաշխարհի հեռաբրնակ ողիներուն...:

Ո՞ր բաց ճամբէն ես յանձնըլիմ կատար տանող կածաններուն,
Բարձրանամ վեր, դընեմ պըսակ ձեր ճակտին վէս, չուշանալոյն,
Ու երկրախումբ բարձունքներէ ակնարկս յատած հորիզոնին,
Նոյն խնդութեամբ ես ողջունեմ Հայ-բընաշխարհն եղեմային...:

1945 Յուն. 23

Թ. Ա. ՀՐԱԶԴԱՆ

ԷԶՄԻԱԾՆԻ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

1655 ԹՈՒԱԿԱՆԻՆ


(Շար. թ. 3-4, էջ 68)

Բ.

Խոստովունքիս հաւատարիմ զտնուելու
համար՝ նախորդ յօդուածիս շարունակու-
թիւնը պիտի պարունակէ Դավէտնիէի Ա.
Գրքին երրորդ գլխուն թարգմանութիւնը,
որմէ ընթերցողը, վերջնական ծանօթա-
ղրութիւններէս առաջ, պիտի ստանայ 1655
թուականին էջմիածնի Բուն Բարեկենդա-
նին նկարագրութիւնը, անոր Մայր Տա-
ճարին հիմնարկութեան դէմ չարամիտ
Սատանային յարուցած արդեւքներուն հը-
նաւանդ գրոյցը: Այսպէս նաեւ օձերով լի-
ցուն վերապին մէջ Ս. Գրիգոր Լուսաւոր-
չին տասնընթիւ տարի հրաչքով ապրիլը,
Տրդատ Թագաւորին մոլեղնոտ տուփանքը,
Հռիփսիմեան կոյսերուն անպարտելի դի-
մադրութիւնը եւ անոնց նահատակութիւ-
նը:

Բոլորն ալ Ազաթանդեղոսին պատմածէն
քիչ մը տարբեր, այլ խոկութեան մէջ մի-
եւնոյնը, զոր Դավէտնիէ ճանապարհորդ
Հայ ընկերներէն լսած էր:

Նկատի առնելով հանդիսաւոր այդ օր-
ուան ներկայացուածին մասնակցող բարձր-
աստիճան եկեղեցականներուն բազմութիւ-
նը, որ Հայրապետը կը շրջապատէր, անոր
հեղինակաւոր վարչութեան զօրեղ կազմա-
կերպութիւնը, տրամադրած եկամուտներն
ու դրամական միջոցները, էջմիածնի
Հայրապետութեան արդի վիճակը ասկէ ե-
րեք դար առաջուանին հետ բազդատելով,
ընթերցողը դիւրաւ պիտի համոզուի որ
Մահմետական արքաներուն տիրապետու-
թեան ներքեւ էջմիածնի հայրապետական



Պատկերութիւն «Գեղարդին», կատարուած
Դավէտնիէն:

զահը աւելի նուազ կրած է եւ նուազա-
ցած, քան թէ քրիստոնեայ վեհապետնե-
րու եւ անոնց յաջորդող ժամանակամիջո-
ցին:

Անժխտելի եւ ցաւալի այս իրականու-
թեան յանդիման պահ մը խորհրդածելէն
յետոյ, անցնի՛նք վերոյիշեալ Գ. գլխուն,
որուն նախորդին մէջ Դավէտնիէ կը պատմէ

Թօքթաթէն Կարին հասնելը, ուրկէ Երեւան տասներկու օրուան կարաւանական ճանապարհ մէջը:

Անոր ամենակարճը՝ Արաքսի գետընթացքին հետեւին էր. թէպէտ եւ Չօպան Քէօփրիւին քով արքայական պողոտայէն դատուող Կարսի ճանապարհով ալ կարելի էր կատարել, զոր Դաւիթանիէն երեք անգամ ըրած էր եւ այդ առիթով Անիին աւերակները այցելած:

Արաքսի գետաձորէն անցած ատեն Հայոց քարաշէն տուններուն վրայ կը խօսի՝ դանոնք գետնափոր շտեմարաններու նմանընկերով:

Արդարեւ՝ Հայաստանը այցելելու բախտը չունեցող Աղլայինը Ալիշանին տեղադրած Շիրակի հատորին մէջ՝ եթէ ոչ այլապէս, կրնայ տեսնել կիսով հողին մէջ թաղուած այդ բնակարաններուն ներքնամասին զճաղրութիւնը:

Կարաւանը Արաքսի գետընթացքը հետեւած ատեն, անկէ մի քանի անգամ անցնելէն եւ անոր մօտ դանուող զիւղաքաղաքներուն մէջ զաղար առնելէն յետոյ՝ Կարսի կողմէն իջնող Ախուրեան գետին քով կը հասնի, զոր Դաւիթանիէ չէ՛ յիշատակած:

Այս գետն էր որ՝ այդ թուականին, Տաճկաց եւ Պարսից տիրապետութիւններուն միջեւ սահմանադիմ կը ծառայէր:

Երասխաձորէն դուրս ելլալուն՝ կարաւանը զաշտափայրերու մէջ իր գաղաղները կ'առնէր:

Վերջին գաղարին յաջորդ օրը Էջմիածին կը հասնի, զոր այլապէս ինչ Բիլիսէ՝ Les trois églises կ'անուանէին. կոչում մը որմէ կարելի է Erivan տեղանունը ստուգարանել, այսինքն է երեք վանք:

Դաւիթանիէ հետեւեալ կերպով դոցած է իրեն այդ Բ. գլուխը, որ Կ. Պօլսէն, աւելի ճիշդը, Իւսքիւտարէն Երեւանի ճանապարհորդութեան նկարագրութիւնն է ուրուն ընթացքին նա չէ թերացած յիշատակելու Հայ անունին վերաբերեալները: Այնքեւ ապացոյց մը որ Փոքր Ասիոյ ժողո-

վորդներուն մէջ Հայ տարրին աւելի համակրած էր եւ զայն զնահատած՝ անոր ընտիր յատկութիւններուն եւ բանիքուն օրծունէութեան համար, ո'չ միայն իրեւ ճարպիկ վաճառական այլ իրեւ պարկէշտ եւ ճարտար արուեստատիր:

«Քանի որ, կը յանդէ, Կարսի գետը անցնելով, Թուրքիան կը վերջանայ, եւ ալ ընթերցողիս հանդիստ մը տալու համար այս գլուխին վերջակէտը կը դնեմ եւ կը բանամ նոր մը Պարսկաստանի մէջ մտնելով»:

Գ.

Կ. Պօլսէն իսպահան նամակարկին շարունակութիւնը. պարսկապատակ առաջին երկիրներէն Երեւան:

«Հայաստանի ճամբով Պարսկաստան մտնելու ատեն՝ Երեւանէն երեք ժամ առաջ, նկատուողութեան արժանի առաջին տեղը Երեք Եկեղեցիները ըստաճն է որ իրարմէ քիչ հեռուոր երեք վանքեր են»:

Ասով կը հաստատուի Erivan-ին ստուգարանութիւնը: «Ամենամեծը եւ զեղեցկագոյնը՝ Հայերուն Մեծ Հայրապետին բնակավայրն է: Այս առաջինին հարաւակողմը, հրացանի (mousquet) տարողութեան մը հետեւ, ուրիշ երկրորդ մը կայ, եւ քառորդ մզոն դէպի Արեւելք՝ երրորդ մը որ Կուսանաց Մենաստանն է:

Հայերը այս տեղը կ'անուանեն Egmiasin (Էկմիասին), այսինքն է՝ Fils unique (միածին), որ զլիաւոր եկեղեցիին ալ անունն է»:

Խնդիր է թէ Դաւիթանիէն իր զրածը ի՞նչ կերպ կը հնչէր: Մօլլէսի, Լա Ֆօնդէնի ժամանակակից այս սրտուական Փրանսացին՝ որ ո'չ զրադէտ էր եւ ո'չ ալ լեզուադէտ, Էջմիածինը՝ եթէ Հայուն հնչածը լաւ ըմբռնէր, ներկայիս Etchmiadzine զրած պիտի ըլլար:

«Անոնց (Հայերուն) ժամանակադիրքերուն մէջ կայ որ ասոր շինութիւնը Քրիս-

տոսի դալուստէն շուրջ երեք տարի վերջը սկսաւ. եւ թէ պատերը երբոր արմուկի բարձրութեան հասած էին, Սատանան զիւր ատեն կու գար եւ ցորեկ ատեն շինուածը կը քակէր. թէ՛ այս այսպէս մօտ երկու տարի տեսնց: Այլ զիւր մը Յիսուս Քրիստոս երեւցաւ. եւ այդ վայրկեանէն ի վեր Սատանան կարող չեղաւ Եկեղեցոյն աւարտութիւն արդելք ըլլալ:

Դա՛ Ս. Գրիգորին նուիրեալ է զոր Հայերը յոյժ կը մեծարեն. եւ հոն կը տեսնուի քարէ տախտակ մը որ՝ ըստ այդ միւսին ժամանակադիրքին, է՛ նոյն այն քարը որուն վրան Քրիստոս՝ Ս. Գրիգորին երեւցած ատեն, կը կենար:

Անոնք որ եկեղեցի կը մտնեն մեծ ջերմեւանդութեամբ կ'երթան այդ քարէ տախտակը համբուրելու:

Երկրորդ վանքը կառուցուած է ի պատիւ Իշխանուհիի մը որ քառասուն աղնուական օրիորդներու հետ իտալիայէն եկած էր Ս. Գրիգորը տեսնելու: Հայաստանի թաղաւորներէն մին հորի մը մէջ զայն նետել տուած էր՝ օձերու հետ, որոնցմէ ո'չ մի մնաց կրեց:

Հրաշքով մը նա տասնըչորս տարի հոն ապրեցաւ. եւ այդ ժամանակէն ի վեր երկուքէն երեք մզոն անոր շրջականերուն օձերը ոչ մի չարիք կը զորեն:

Կոստաշտ թաղաւորը ուղելով հեշտանալ այդ իշխանուհիին՝ որ շատ զեղեցիկ էր, եւ անոր ընկերուհիներուն հետ, անոնք իրենց առաքինութեամբ կը յաղթեն անոր որ կարող չէր եղած զլուս ելլել իր նապատակին՝ զամէնքն ալ մեռցնել կու տայ: Ահա՛ ինչ որ Հայերը այդ վանքին հիմնարկութեան համար կը պատմեն»:

«Հայերուն սովորութիւնն է, ըլլա՛յ Պարսկաստան զնացողները եւ կամ իմ այս նկարագրած ճամբով եկողները, Երեք Եկեղեցիները երթալ եւ իրենց ջերմեւան-

դութիւնը կատարել. կարաւանն ալ սովորաբար հինգ վեց օր հոն կը մնայ. այդ պարագայով անոնք կը խոստովանին եւ Հայրապետին արձակումը կ'առնեն:

Հայրապետը իրեն ներքեւ քառասունը՝ եօթը Արքեպիսկոպոս ունի. եւ իւրաքանչիւր Արքեպիսկոպոս չորս կամ հինգ անթեմ Եպիսկոպոսներ, որոնց հետ միաբանօրէն վանքի մը մէջ կ'ապրի, ուր շատ մը արեղաներու հովուութիւնը կը վարեն:

Ժամերկութիւնը եւ պատարազը ըսածնուն պէս, ինչ որ օրուան ժամը մէկին (ըստ հին սովորութեան) կը վերջանայ, ամէնքն ալ իրենց ապրուստին համար, հոգը կ'երթան աշխատելու:

Մեծ Հայրապետին եկամուտը շուրջ վեց հարիւր հազար սկուդ է (հինգ Փրանքոնց ծով). եւ տասնըհինգ տարեկանէն վեր եղող բոլոր Քրիստոնեաները պարտաւորեալ էին անոր տարեկան վճարել հինգ Տօլէին արժէքը (թերեւ՝ 800 որ Փրանքին 20րդ մասն է):

Սակայն եւ այնպէս շատերը՝ միջոցը չունենալով, չեն վճարեր. այդ պակասը հարուստները կը լեցնեն. եւ կան որ ինչուան երկու կամ երեք սկուդ կու տան:

Այս բոլոր զրամբ Հայրապետին քսակին մէջ չէ՛ որ կը մնայ: Տարիներ կը հանդիպին որ իրեն խնայողութեան հարկ կ'ըլլայ աւելցնել. եւ երաշխաւոր իսկ ըլլալ այն աղքատ Հայերուն համար որոնք ի վիճակի չեն carage-ը վճարելու, այսինքն է տարեկան հարկը որ պարտաւոր են Մահմետական Իշխաններուն, որոնք դանոնք իրենց տիրապետութեան ներքեւ բռնած են. ապա թէ ո'չ կը վախցուի որ չբաւորութիւնը դանոնք ստիպէ մահմետական դառնալու, եւ կամ իրենց կնիկովն ու դաւակներովը ծախու հանուելու:

Իւրաքանչիւր Արքեպիսկոպոս իրեն իրաւասութեան ընդարձակութեան մէջ այս խնդրոյն վերաբերեալ պէտքերուն վիճակացոյցը կը հաղորդէ. եւ այս եղանակով Հայրապետը մէկ կողմէն առնելով միւս

կողմին կը դործածէ՝ իրեն անձնականին համար օգտուելով մի միայն այն եկաւ — մուտէն զոր նա կը ստանայ ութսուն հազար զիւղերէն որ Անոր ներքեւ կը զըտնուին՝ ինչպէս որ Ս. Ստեփաննոսին Արքեպիսկոպոսը ինծի վստահացուց»:

Այդ Արքեպիսկոպոսը, 1655 թուականին, Նախավկային Վանքն ու Տաճարը ի հիմանց զեղեցիակերտ վերականգնող Նոր Զուգայեցի նշանաւոր Յակոբ վարդապետն էր, այն որ Հաղբակեցիին պիտի յաջորդէր, ինչպէս վերեւ գրեցեցինք:

Եւ Դավէտնիէն շարունակելով կ'աւելցնէ. «Հայերուն կրօնքին եւ Արեւելցի մի քանի Քրիստոնեաներուն մասին ուրիշ անդամ պիտի գրեցեմ՝ տեղւոյն վրայ ստացած ծանօթութիւններու համեմատ. եւ այս առաջին զրբին մէջ ընթերցողին հետ պիտի խօսիմ ինչ որ ամենաշատ նշանակելի է այն ճանապարհներէն ամէն մէկուն մէջ, որոնցմով Բարիւզէն Իսպահան կարելի է երթալ»:

«Պարսկաստանէն ի դարձիս, 1655 ի վերջերս վերջերը, Երեք Եկեղեցիներէն անցայ:

Մեր կարաւանը տասնմէկ օր հոն մնաց, թէ ձեան սաստիկ տեղալուն պատճառով՝ որ մեր ճամբաները զոցած էր, եւ թէ որովհետեւ Հայերը Բարեկենդանը հոն կ'ուզէին անցընել եւ կատարել յետոյ իրենց ջերմեռանդութիւնը:

Մեր հասնելուն յաջորդ օրը Հայրապետին այցելութեան գնացի: Փոքրիկ սենեակի մը մէջ զիս մտցուցին ուր նա խօսիւրի մը վրան՝ մեր զերծակներուն նման, ծալապատիկ նստած էր:

Սենեակին բոլորտիքը, չորս Արքեպիսկոպոս եւ ինը Եպիսկոպոսներ միեւնոյն գերբով նստեր էին:

Այդ Եպիսկոպոսներէն մին բաւական լաւ խալերէն կը խօսէր:

Հայրապետը շատ լաւ կերպով զիս ըն-

դունեցաւ. զրեթէ երեք ժամ անոր հետ մնացի:

Մեր ունեցած խօսակցութեան մէջ ինծի յայտնեց որ մեծապէս կը վախաբէր Փրանսացի կրօնաւորի մը հետ բարեկամաբար տեսակցիլ. քանզի զիտէր որ Փրանսական ազգը քաղցրաբարոյ է եւ բարեկիրթ. ընդհակառակը, իտալականը ամէն բանի մէջ կ'ուզէ զօրել:

Այս վիճարանութեան միջոցին վանքին արեղաներէն մին ներս մտաւ, որ իր անձին ապաշխարանք մը պարտադրելու համար քանակաւ տարի է ի վեր ո'չ ոքի հետ կը խօսէր. եւ Արեւելքի մէջ ասիկէ խոտաւոր ընող արեղաներ չատ կան:

Այդ վանականէն աւելի մտաթափ եւ տըղեղ մարդ երբեք չէ եղած:

Հայրապետը դիտմամբ զայն բերել տըւած էր:

Իր հեղինակութեան զօրութեամբ անոր հրամայած ըլլալով խօսիլ՝ խիոյն նա խօսիլ սկսաւ:

Եւ որովհետեւ այլեւս հրաժեշտս կ'ուզէի առնել Հայրապետէն, նախընթացի մը բերել տուաւ որ պանիրէ, տանձէ, խնձորէ եւ տեսակ մը սոխէ բաղկացած էր:

Երբ այդ բոլորը sofra (սօֆրա = սուֆրա. տնի.) սեղանին վրայ դրուեցաւ, որ զետիւրը փուռած կաշի մէ, Հայրապետը աղօթեց եւ կոտորեց հացը, անկէ ամէնուն կտոր մը բաժնելով եւ իրեն համար պատու ուի մը միայն առաւ: Գինին ալ օրհնեց, այլ անկէ բնաւ չխմեց:

Ես ալ տանձ մը կերայ եւ դաւաթ մը զինիէն վերջը, Հայրապետէն հրաժեշտ առնելով դուրս ելայ:

Իր կարգին պիտի նկարագրեմ Հայ կղերին ազդելու կերպը, անոր մեծ խստամբերութիւնը. եւ թէ որպիսի՞ խստութեամբ անոնք կը բռնեն Մեծ պահքը եւ ծոմի միւս օրերը, որոնք միապետմար հաշուելով տարւոյն վեց ամիսները կը բոլորեն»:

Որ է ըսել՝ մեզմէ երեք դար առաջուան

Հայ կղերը տարւոյն կէսը խիստ ծոմապահ-հոթեամբ կ'անցընէր:

Դավէտնիէ՝ շարունակելով, խիոյն կը յիշատակէ վերոյիշեալ երկուքէն երեք ոտնաչափ մեծութեամբ կարմրախայտ (truie) ձուկերը, ազնիւ զինին եւ համեղ պտուղները, որոնք կարաւանին տասնմէկ օր ունեւ դադարին ատեն Հայրապետէն պատուաւիրաբար նուէր ստացած էր:

«Բուն Բարեկենդանին նախընթաց շաբաթ օրը Հայրապետը հրաւէր զրկեց ամբողջ կարաւանին, տէրերուն ու սպասաւորներուն անխտիր, կիրակի օրուան պատարագին ներկայ գտնուելու եւ յետոյ վանքին մէջ ճաշելու:

Հայերուն համար այդ կիրակին Բարեկենդանին վերջին օրն է:

Մեծ պահքը կը սկսի անոր յաջորդ օրը, որ Բաղլախորան մեր կոչած Երկուշաբթին է, որուն առաւօտը Սրբաբանին ամբողջ լայնութեանը անթափանց վարագոյր մը կը քաշուի: Մայր Խորանին այս փախուժ ինչուան Զատիկ կը տեսէ:

Պատարագին արարողութիւնը լմնացածին պէս, ամէնքը միասին 15էն 20 ոտնաչափ (4 մեղր 95էն 6 մեղր 60) լայնեկ եւ երկայն ձեմելիքի մը մէջ անցան: Ձեմելիքին երկայնութեանը՝ մէկ կողմէն եւ միւսէն, քարաշէն սեղան մը դրուած է. նմանապէս պատին երկայնքին նստարան մը:

Ձեմելիքին մէկ գլուխը՝ չորս հինգ ոտնաչափ լայնութեամբ քառակուսի սեղան մը կայ, որուն չորս ծայրերուն չորս մոյթերը վերամբարձ կը բռնեն զոգացեալ կամար մը՝ որ ամպհոփանի կը ծառայէ այդ սեղանին: Դիմացէն նայելով՝ ատոր ներքեւ դրուած է Հայրապետին աթոռը, ուր կէ նա ձեմելիքին ամբողջ երկայնքը կընայ տեսնել եւ միանգամայն՝ աջէն եւ ձախէն, երկու Արքեպիսկոպոսներուն սեղանները: Սեղանը եւ աթոռը նմանապէս քարէ են:

Միւս Արքեպիսկոպոսները, Եպիսկոպոսները, վանականներն ու հրաւիրեալները երկու երկայն սեղաններուն առջեւ շարուած են:

Հայրապետին սեղանին դէմ առ դէմ, ձեմելիքին միւս ծայրը, փոքրիկ դուռ մը կը գտնուի, ուսկից երեք աստիճան ելլելով, խորտիկները կը բերուին:

Մեր սեղանը եկածը տարբեր դոյնով տեսակ տեսակ pilau (փիլաւ)ներ էին: Մեղի հրամցուցին նաեւ զանազան ձուկեր, ընդ որս յոյժ զեղեցիկ կարմրախայտներ:

Ընդամէնը քառասուն ափսէ (թէփսի. սահան) եկաւ. սակայն անոնց ամէն մին ափսքան մեծ եւ լեցուն էր՝ որ մարդ մը հաղիւ կարող էր վերցնել: Զանոնք զետիւրը դրին, Հայրապետին դիմացը, որ կախարիչները հանուելէն վերջը, նստած տեղէն ոտքի ելաւ. նոյնը ըրին բոլոր ներկաները:

Հայրապետը յետոյ աղօթեց եւ օրհնեց խորտիկները:

Վեց Եպիսկոպոս՝ այն ատեն, մեծկակ տարազներով (չէքէփ) խորտիկները այդ խոշոր ափսէներէն աւելի փոքրերու մէջ դրին եւ ատոնցմով երկու երկայն սեղանները լեցուեցան:

Իւրաքանչիւր ոք, իր քովը հողէ խոշոր սրուակը (քեսսէ) ունէր, որ խմուածին պէս, զինիով նորէն կը լեցնէին. եւ զինին շատ ընտիր էր:

Գալով Հայրապետին եւ անոր սեղանակից երկու Արքեպիսկոպոսներուն, ինչպէս նաեւ հրաւիրեալներուն սեղանը գտնուող Արքեպիսկոպոսներուն, անոնցմէ ամէն մէկուն քիչ մը կանաչեղէն եւ երկու հաւկիթ բերին: Եպիսկոպոսներէն ոմանք միմիայն ձուկ կերան եւ բնաւ զինի չխմեցին:

Ճաշին վերջաւորութեանը Եպիսկոպոս մը, զրիչն ու կաղամարը ձեռքը, սեղանին երկայնքին եկաւ մէկին միւսին հարցնելու թէ իր ջերմեռանդութեան համեմատ ի՞նչ կը կամենար Եկեղեցւոյն նուիրել:

Եպիսկոպոսը հրաւիրեալին անունն ու ի՞նչ տեսակ նուէր տալը կը նշանակէր:

Հարուստ վաճառականները ինչուան երկուքուման(Toman) կու տան. եւ սպասաւորի մը նուագադոյն տուածը մէկ ոսկի է (օր):

Թոմանն ու ոսկին գրամներուն ցուցակին մէջ բացատրուած են:

Իմ կողմանէ չորս թոման գրել տուի Եպիսկոպոսին, պայմանով որ յաջորդ օրուան ժամասացութենէն յետոյ աղօթք մը զուրցէին իմ Թաղաւորիս եւ պերճաշուք Օսկանի Դուքսին համար, որուն պատկանելու պատիւը ունէի»:

ՏԱրթանեանին ժամանակակից, արքայազուն այդ իշխանը, Լուդովիկոս ԺԴ-ին մեղկասէր եղբայրն էր, Անդրիոյ Թաղաւորին պէրասէր Հանրիէթ քրոջը ամուսինը, որ իր անձին չափազանց սիրահարուած ըլլալով, օրն ի րուն շարքով եւ զոհարեղէններով ինքզինքը կը պաճուէր:

«Եպիսկոպոսը, այս խօսքին վրան, առանց պատասխանելու, Հայրապետին դը-

նաց, որ զայն խելոյն ինծի վերադարձուց ըսելու համար որ Էթէ նոյնիսկ բան մը չտայի, անոնք պարտաւոր էին աղօթելու Քրիստոնեայ արքաներուն ամենաականաւորին, անոր Աւագեղբոր Օսկանի Դուքսին եւ արքայական համայն ընտանիքին համար:

Եպիսկոպոսը դրի առնելը լմնցուցած ըլլալով՝ խորտիկները վերցուցին տարին. եւ Հայրապետը զոհութեան աղօթքը զուրցեց. որմէ վերջ պտուղները բերին եւ մեծ քանակութեամբ սեխ:

Քիչ մը վերջը երեկոյեան ժամերգու-թեան զանգակը դարկաւ. որովհետեւ մենք այլեւս Թուրքիոյ մէջ չենք գտնուիր, ուր քրիստոնեաներուն զանգակը չէ արտօնուած. մինչդեռ Պարսից Թաղաւորը ամէն բան անոնց թոյլատրած է. որով Հայերուն բոլոր եկեղեցիները զանգակ ունին, զոր անոնք քրիստոնեայ երկիրներէն բերել կու տան»:

Պոօթ. ԼԵԻՈՆ ԿԻԻՐԵՂԵԱՆ

(Հայրունակի)

ԷԶԵՐ ՓԱՅՏԱՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԻԵՍՏԻՅ

ՓԱՅՏԱՓՈՐԱԳՐԻՉ - ԳԾԱԳՐԻՉ

ԲԱՐՍԵՂ ԶՈՀՐԱԲԵԱՆ

Իրանի Սպահան քաղաքի պատմական Նոր-Ջուղա արւարձանի հմուտ, ձեւակերպուած եւ վարպետ հայ փայտափորագրիչ - զծագրիչներէ մէկն է Բարսեղ Զօհրաբեանը, որ երեսուն եւ հինգ երկար տարիներ իրեն նւիրել է միայն փայտափորագրութեան արւեստին եւ քանդակել է մէկը միւսից զեղեցիկ զարդանկարներ, որոնք իրենց ինքնուրոյն ոճով, ներդաշնակ կառուցուածքով եւ զեղարւեստական նորութեամբ ընդգծում են նրա արւեստի էութիւնը:

Հայ մամուլը եւ բանասիրական գրականութիւնը, դժբախտաբար, մինչեւ օրս էլ չեն արձանագրել այս ինքնատիպ արւեստագէտի կեանքի եւ գործունէութեան հիմնական դէրը եւ նա համարեա մնացել է անյայտութեան մէջ: Այսօր, սակայն, ժամանակն է, որ ընդգծին նրա արւեստի էական յատկանիշերը:


Կարճ է նրա կեանքի պատմութիւնը: Ծնւել է նա 1873 թւականին Նոր-Ջուղայում՝ մի չքաւոր ընտանիքում: Սոհարար հայրն իր որդու կրթութեան համար զո-



Փայտափորագրիչ՝ Բարսեղ Զօհրաբեան

հում է իր լաւագոյնը: Ուսանում է Նոր-Ջուղայի «Ս. Մինաս» եկեղեցու դպրո-

ցում, ժամանակի յայտնի գրաբարագէտներ՝ Աւետիք, Մկրտիչ եւ Գէորգ Զօհրաբեան եղբայրների մօտ, որոնք իրենց սանին զարգացնում են Աւետարանի, Ժամագրքի եւ Սաղմոսի գրաբար ու աշխարհաբար ընթերցանութեամբ: Այդ տարրական դպրոցով էլ փակւում է նրա ուսման ընթացքը: Այնուհետեւ նա ամբողջ 7 տարի բողոքական միսիօնարների համար վաճառում է ս. Գիրք եւ սահապանում իր գոյութիւնը: 1892 թւին ամուսնանում է Նոր-Ջուղայում՝ Օր. Մարիամ Գ. Արզարեանի հետ: Որոշ ժամանակ նրան հարւածում է անդործութիւնը: Այդ շրջանումն էլ նա թղթի վրայ դժած ծաղիկներն ու մանրանկարները փորագրում է փայտի վրայ եւ ներկայացնում իր կնոջը, որի գնահատութիւնն ու խորախուսանքը նրան ներշնչում են նոր եռանդ եւ հրահրում նրա հոգում արւեստի սէրը: Այդ օրւանից էլ նա վրձնում է իրեն ամբողջապէս նւիրել փայտափորագրութեան մշակոյթին: Բնորոշ է եւ այն, որ նա ո՛չ մի փորագրիչ-քանդակագործի մօտ չի սովորում, ո՛չ էլ որեւէ դպրոց է յաճախում: Իր բնածին ձիրքը մշակում է նա ինքնաշխատութեամբ եւ շնորհիւ իր յամառ, տոկուն կամքի եւ անվրձատ աշխատասիրութեան՝ հետզհետէ



Ծագիկ պատուանդաններ (ընկուզենու և տանձենու փայտից)